USAID
FROM THE AMERICAN PEOPLE

## Ֆինանսական Ոլորտի Զարգացման Ծրագիր

# ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ



## Հաճախակի տրվող ՀԱՐՑ 17 ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆ

ՀԱՐՑ 1 Ի՞նչ է բաժնետոմսը:

ՀԱՐՑ 2 Ի՞նչ նպատակով է թողարկվում բաժնետոմսը:

ՀԱՐՑ 3 Ի՞նչ տարբերություն բաժնետոմսի և պարտատոմսի միջև:

ՀԱՐՑ 4 Ինչու՞մ է կայանում թողարկողի հետաքրքրությունը բաժնետոմս թողարկելիս:

ՀԱՐՑ 5 Ինչու՞մ է կայանում ներդրողի հետաքրքրությունը բաժնետոմս ձեռք բերելիս:

ՀԱՐՑ 6 Բաժնետոմսերի ի՞նչ հիմնական տեսակներ կան:

ՀԱՐՑ 7 Ո՞րն է հասարակ (սովորական) բաժնետոմսը:

ՀԱՐՑ 8 Ո՞րն է արտոնյալ բաժնետոմսը:

ՀԱՐՑ 9 Արտոնյալ բաժնետոմսերի ինչպիսի՞ տեսակներ կան:

ՀԱՐՑ 10 Ինչպե՞ս են վճարվում բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները (դիվիդենդներ):

ՀԱՐՑ 11 Կարո՞ղ է արդյոք բաժնետիրական ընկերությունը չվճարել դիվիդենդներ:

ՀԱՐՑ 12 Կարո՞ղ է բաժնետոմսի վաճառքի գինը տեղաբաշխման ընթացքում լինել ավելի բարձր քան դրա անվանական արժեքը:

ՀԱՐՑ 13 Ի՞նչ գործոններ են ազդում բաժնետոմսի եկամտաբերության վրա:

ՀԱՐՑ 14 Ի՞նչ հարկեր են վճարվում բաժնետոմսից ստացված եկամուտից:

ՀԱՐՑ 15 Ինպե՞ս կարելի է ձեռք բերել բաժնետոմս:

ՀԱՐՑ 16 Կարելի՞ է արդյոք վերադարձնել հասարակ բաժնետոմսը:

ՀԱՐՑ 17 Ե՞րբ է ծագում բաժնետոմսի նկատմամբ սեփականության իրավունքը:



## Ի՞նչ է բաժնետոմսը 1

Բաժնետոմս է համարվում այն արժեթուղթը, որը հավաստում է դրա տիրոջ (բաժնետիրոջ) բաժնետիրական ընկերության շահույթից շահութաբաժնի ձևով մաս ստանալու, բաժնետիրական ընկերության գործերի կառավարմանը մասնակցելու և նրա լուծարումից հետո մնացած գույքից մաս ստանալու իրավունքը:

## Ի՞նչ նպատակով է թողարկվում բաժնետոմսը: 2

Բաժնետոմսը թողարկվում է բաժնետի-րական ըն-կերության ստեղծման (հիմնադրման) պահին, ձեռնարկու-թյան կամ կազմակերպության բաժնետիրական ընկերությունների ձևով վերակազմավորման ժամանակ, երկու կամ մի քանի բաժնետիրական ընկերությունների միաձուլման (կլանման) դեպքում, ինչպես նաև գոյություն ունեցող կանոնադրական կապիտալի մեծացման նպատակով դրամական միջոցների համախմբման համար:

## Ի՞նչ տարբերություն բաժնետոմսի և պարտատոմսի միջև: 3

Ներդրողը՝ գնելով բաժնետոմս, դառնում է թողարկող ընկերության բաժնետերերից մեկը, իսկ ձեռք բերելով պարտատոմս, դառնում է նրա փոխատուն:

## Ինչու՞մ է կայանում թողարկողի հետաքրքրությունը բաժնետոմս թողարկելիս:

4

**Բաժնետոմսեր թողարկելով թողարկողի հետաքրքրությունը կայանում է հետևյալում.**

1. Բաժնետիրական ընկերությունը պարտավոր չէ վերադարձնելու ներդրողի կողմից ընկերության բաժնետոմսերում կատարած կապիտալ ներդրումը: Ներդրողի կողմից բաժնետոմսերի ձեռք բերումը դիտվում է որպես թողարկողի ծախսերի երկարաժամկետ ֆինանսավորում:
2. Սովորաբար թողարկող ընկերության կողմից շահութաբաժինների վճարում չի երաշխավորվում:
3. Շահութաբաժինների չափը կարող է սահմանվել անկախ շահույթից: Անգամ եթե առկա է մաքուր շահույթ, բաժնետիրական ընկերությունը կարող է ստացված ողջ շահույթն ուղղել արտադրության զարգացմանը և չվճարել շահութաբաժիններ:

## Ինչու՞մ է կայանում ներդրողի հետաքրքրությունը բաժնետոմս ձեռք բերելիս:

5

**Ներդրողը, ձեռք բերելով բաժնետոմսեր, հետաքրքրված է հետևյալում.**

1. Բաժնետոմսերում ներդրված կապիտալի դիմաց` ձայնի իրավունքի ձեռք բերում: Բաժնետերը հնարավորություն է ստանում մասնակցելու ընկերության կառավարմանը:
2. Եկամուտ ստանալու, այսինքն, շահութաբաժնի ձևով բաժնետիրական ընկերության մաքուր շահույթից մաս ստանալու իրավունքը:
3. Ունենալ կապիտալի հավելաճ, որը պայմանավորված է շուկայում բաժնետոմսերի գնի հնարավոր աճով:
4. Լրացուցիչ արտոնություններ, որոնք կարող է տրամադրել բաժնետիրական ընկերությունն իր բաժնետերերին, օրինակ` ընկերության արտադրանքի ձեռք բերման կամ ծառայությունների մատուցման զեղչեր:
5. Բաժնետոմսերի նոր թողարկումների ձեռք բերման նախապատվության իրավունք, ընկերության լուծարումից և բոլոր պարտատերերի հետ հաշվարկներից հետո, բաժնետիրական ընկերության մնացած գույքից մաս ստանալու իրավունքը:

## Բաժնետոմսերի ի՞նչ հիմնական տեսակներ կան:

6

Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, բաժնետոմսերը կարող են լինել` ըստ ներկայացնողի կամ անվանական, ազատ շրջանառու կամ սահմանափակ շրջանառու, հասարակ կամ արտոնյալ:

Բաժնետոմսերն` ըստ իրենցով պայմանավորված իրավունքների, լինում են հասարակ (սովորական) և արտոնյալ: Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի բաժնետիրական ընկերությունը կարող է թողարկել հասարակ (սովորական), ինչպես նաև մեկ կամ մի քանի տեսակի արտոնյալ բաժնետոմսեր:

Համաձայն ՀՀ գործող օրենսդրության, բաժնետոմսերը կարող են թողարկվել միայն անվանական, իսկ հաշվետու թողարկողների կողմից թողարկված բաժնետոմսերը պետք է լինեն միայն ոչ փաստաթղթային: Տվյալ թողարկողների կողմից բաժնետերերի սեփականատերերի ռեեստրի վարումը պետք է հանձնարարվի Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիային:

## Ո՞րն է հասարակ (սովորական) բաժնետոմսը:

7

Հասարակ բաժնետոմսի սեփականատերն ունի այն բոլոր իրավունքները, որոնք հավաստված են բաժնետոմսով (մասնակցել ընկերության ընդհանուր ժողովին` վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով, ստանալ շահութաբաժիններ ընկերության գործունեությունից առաջացած շահույթից, իսկ ընկերության լուծարման դեպքում` ստանալ ընկերության գույքի իրեն հասանելիք մասը և այլն):

## Ո՞րն է արտոնյալ բաժնետոմսը: 8

Արտոնյալ բաժնետոմսի սեփականատերը չի ստանում ձայնի իրավունք ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի: Նրա արտոնությունները կայանում են նրանում, որ ընկերության կանոնադրությամբ և թողարկման պայմաններով սահմանվում է արտոնյալ բաժնետոմսի դիմաց վճարվող շահութաբաժինը և լուծարային արժեքը (որը վճարվում է ընկերության լուծարման ժամանակ):

Համաձայն ՀՀ օրենսդրության, արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերն ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում ձայնի իրավունք ունեն, եթե քննարկվում են.

1) ընկերության վերակազմավորման և լուծարման հարցերը,

2) ընկերության կանոնադրության մեջ այնպիսի փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին հարցերը, որոնք սահմանափակում կամ փոփոխում են այդ դասի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները, ներառյալ` այլ դասերի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարվող շահութաբաժինների և (կամ) լուծարաին արժեքի սահմանումը կամ ավելացումը, ինչպես նաև այլ դասի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերին շահութաբաժինների և (կամ) լուծարային արժեքի վճարման հերթականության արտոնությունների տրամադրումը:

Արտոնյալ բաժնետոմսերի տերը ձայնի իրավունք է ստանում նաև այն դեպքում, երբ բաժնետերերի տարեկան ժողովում ընդունվում է սահմանված դիվիդենդների չվճարման կամ ոչ լրիվ վճարման մասին որոշում կամ տվյալ դասի արտոնյալ բաժնետոմսերի փոխարկման հնարավորությունը հասարակ բաժնետոմսերի:



## Արտոնյալ բաժնետոմսերի ինչպիսի՞ տեսակներ կան: 9

Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ընկերությունն իրավունք ունի տեղաբաշխել հաստատագրված կամ փոփոխական շահութաբաժնով, կուտակման, փոխարկելի և այլ տեսակի արտոնյալ բաժնետոմսեր, եթե դա նախատեսված է ընկերության կանոնադրությամբ: Կարող են լինել նաև վերադարձվելի, վարանտով և այլ արտոբաժնետոմսեր:

- **Հաստատագրված շահութաբաժնով արտոբաժնետոմսերի** թողարկման պայմաններով կամ ընկերության կանոնադրությամբ սահմանվում են դրանց դիմաց վճարվելիք շահութաբաժինների հաստատագրված չափը: Տվյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները վճարվում են անկախ ընկերության եկամտից:
- **Փոփոխական շահութաբաժնով արտոբաժնետոմսերի** եկամտաբերության մակարդակը կախված է որոշակի պարբերական ֆինանսական ցուցանիշի մեծությունից, օրինակ` պետական կարճաժամկետ պարտատոմսեր, միջբանկային վարկային տոկոսադրույքներ, սպառողական զամբյուղի ինդեքսներ և այլն:
- **Կումուլյատիվ (կուտակման)** են համարվում այն բաժնետոմսերը, որոնց դիմաց լրիվ կամ մասնակի չվճարված շահութաբաժինը, որի մեծությունը սահմանված է կանոնադրությամբ, կուտակվում է որոշակի հաշիվների վրա (արհաներում) և վճարվում է հետագայում:
- **Փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերի** թողարկման պայմաններում պետք է սահմանվեն դրանց` սովորական կամ արտոնյալ այլ տեսակի բաժնետոմսերի, փոխարկման (փոխանակման) հնարավորությունն ու պայմանները, ինչպես նաև փոխարկման ժամանակահատվածը, համաչափությունը և փոխարժեքը:
- **Վարանտով արտոբաժնետոմսերն** իրավունք են տալիս իրենց սեփականատիրոջը փոխանակել այն վարանտում նշված, ընկերության կողմից թողարկված այլ արժեթղթերի` որոշակի պայմաններով և ժամկետում: Դրանք տարբերվում են փոխարկելի արտոբաժնետոմսերից նրանով, որ վարանտը կարող է անջատվել բաժնետոմսից և շրջանառվել առանձին, որից հետո բաժնետոմսը դառնում է հասարակ:
- **Վերադարձելի արտոնյալ բաժնետոմսերը**, ի տարբերություն հասարակ բաժնետոմսերի, որոնք չեն մարվում քանի դեռ գոյություն ունի բաժնետիրական ընկերությունը, կարող են մարվել թողարկողի կողմից:
- Ընկերության աշխատակիցներին կանոնադրությամբ սահմանված կարգով կարող են տրամադրվել **աշխատակցի բաժնետոմսեր**, որոնք կարող են լինել հասարակ կամ արտոնյալ: Այն ընկերության աշխատակցին արտոնյալ պայմաններով վաճառված անվանական բաժնետոմս է, որի անվանական արժեքը չի տարբերվում ընկերության հասարակ կամ տարբեր տեսակների արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքից:

## Ինչպե՞ս են վճարվում բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները (դիվիդենդներ)։

10

Հասարակ բաժնետոմսերի դիմաց դիվիդենդները վճարվում է բաժնետիրական ընկերության տվյալ տարվա ընթացիկ զուտ շահույթից, որը բաշխվում է բաժնետոմսերի սեփականատերերի միջև` բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամբ որոշակի շահութաբաժնի տեսքով: Ընկերությունն իրավունք ունի հայտարարել (որոշում ընդունել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

## Կարո՞ղ է արդյոք բաժնետիրական ընկերությունը չվճարել դիվիդենդներ:

11

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում ընդունել առանձին տեսակների և տարատեսակների բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարելու, իսկ որոշակի տեսակի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց (բացառությամբ երաշխավորված դիվիդենդների վճարմամբ արտոնյալ բաժնետոմսերի), որոնց համար վճարվող շահութաբաժնի չափը սահմանված է ընկերության կանոնադրությամբ, նաև շահութաբաժինները ոչ լրիվ չափով վճարելու մասին: Այդ որոշումների գործունեության ժամկետը սահմանվում է ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից, բայց չի կարող մեկ տարուց ավելի լինել:

## Կարո՞ղ է բաժնետոմսի վաճառքի գինը տեղաբաշխման ընթացքում լինել ավելի բարձր քան դրա անվանական արժեքը:

12

Այո, դա պայմանավորված է նրանով, որ բաժնետիրական ընկերության սեփական կապիտալը մեծ է նրա կանոնադրական կապիտալից, քանի որ ընկերության գործունեության ընթացքում նրա ակտիվների արժեքը մեծանում է` կապված սղաճի հետ, չբաշխված շահույթի ավելացումից (շահույթի վերաներդրում), բաժնետոմսերի նկատմամբ պահանջարկից և այլն:



## Ի՞նչ գործոններ են ազդում բաժնետոմսի եկամտաբերության վրա:

13

Բաժնետոմսերի եկամտաբերության վրա ազդող հիմնական գործոններից են.

- վճարվող շահութաբաժինների չափը,
- շուկայական գների տատանումները (բաժնետոմսի առքի ու վաճառքի տարբերությունը),
- հարկային միջավայրը:

## Ի՞նչ հարկեր են վճարվում բաժնետոմսից ստացված եկամուտից:

14

Եթե ներդրողը ֆիզիկական անձ է, ապա «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն բաժնետոմսերից ստացված շահութաբաժինները և կապիտալի հավելաճը (գնման և վաճառքի տարբերությունը) չեն հարկվում:

Եթե ներդրողը ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձ է, ապա «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն բաժնետոմսերից ստացված շահութաբաժինները չեն հարկվում, իսկ կապիտալի հավելաճից ստացված շահույթի դիմաց վճարվում է 20% դրույքաչափով շահութահարկ:

## Ինպե՞ս կարելի է ձեռք բերել բաժնետոմս:

15

Տեղաբաշխման ժամանակ բաժնետոմս կարելի է ձեռք բերել թողարկողից կամ անդերռայթերից (տեղաբաշխողից):

Երկրորդային շուկայից բաժնետոմս կարելի է ձեռք բերել.

- ուղղակի առուվաճառքի պայմանագիր կնքելու միջոցով,
- բրոքերային ընկերության/ներդրումային ծառայություններ մատուցող անձի միջոցով, որն իր հերթին կարող է բաժնետոմս ձեռք բերել բորսայից կամ երկրորդային շուկայից:

## Կարելի՞ է արդյոք վերադարձնել հասարակ բաժնետոմսը:

16

Հասարակ բաժնետոմսը կարելի է վաճառել, նվիրել կամ ժառանգել` ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, սակայն չի կարելի այն հետ վերադարձնել թողարկողին, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի :

Ձայնի իրավունք տվող բաժնետոմսի սեփականատերերն իրավունք ունեն Ընկերությունից պահանջել բաժնետոմսերի հետգնման գնի որոշում և իրենց պատկանող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի հետգնումը, եթե բաժնետերը դեմ է քվեարկել կամ  քվեարկությանը չի մասնակցել, սակայն.

- որոշում, է ընդունվել Ընկերության վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոշոր գործարք կնքելու մասին,
- կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ են կատարվել, կամ հաստատվել է կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որի հետևանքով սահմանափակվել են նշված բաժնետերերի իրավունքները:

## Ե՞րբ է ծագում բաժնետոմսի նկատմամբ սեփականության իրավունքը:

17

Բաժնետոմսի նկատմամբ սեփականության իրավունքը ծագում է այն սեփականատիրոջ անունով  անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրում գրանցելու պահից:



Բաժնետոմսերի թողարկման վերաբերյալ անվճար խորհրդատվություն ստանալու համար դիմեք`

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագիրն իրականացնում է

Էներջինգ մարկեթս գրուպ
ընկերությունը

ՀՀ, Երևան 0012,
Հովսեփ Էմին 75

Հեռ` (374 10) 268982
Ֆաքս` (374 10) 210882
էլ. փոստ` info@fsdp.am

**www.fsdp.am**